## ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՄԵԿ ՓԱՍՏԱԲԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՓԱՐԻԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ «STAGE INTERNATIONAL» ԾՐԱԳՐԻՆ

08.02.2024 17:14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

***Հարգելի փաստաբաններ,***

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի, Փարիզի փաստաբանների պալատի և Փարիզի փաստաբանական դպրոցի միջև առկա շարունակական համագործակցության շրջանակներում այս տարի ևս **Հայաստանից 1 փաստաբան հնարավորություն կունենա մասնակցել Փարիզում անցկացվող "Stage International" (ֆրանսերեն) 8 շաբաթյա ծրագրին (դասընթացին)**:

**Մրցույթին մասնակցելու համար կարող են դիմել** ֆրանսերենի գերազանց իմացությամբ այն փաստաբանները, որոնց տարիքը չի գերազանցում 40 տարեկանը և որոնց փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը դիմելու պահին կասեցված չէ:

***Ծրագիրն անց է կացվելու 2024 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին (8 շաբաթ):***

Փարիզում բնակվելու և ճանապարհի **բոլոր ծախսերը պետք է հոգա անձամբ մասնակից փաստաբանը**:

***Մրցույթի մասնակցության համար հայտերը և անհրաժեշտ փաստաթղթերը պետք է ներկայացվեն մինչև 2024 թվականի ապրիլի 9-ը ներառյալ:***

***Հայտերի ներկայացման և անհրաժեշտ փաստաթղթերի հետ կապված մանրամասն տեղեկատվության կարող եք ծանոթանալ ստորև ներկայացված նկարագրում.***

***Լրացուցիչ հարցերի դեպքում կարող եք զանգահարել Մարտուն Փանոսյանին՝ 091 47 02 44 հեռախոսահամարով:***

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })